ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/19 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

26.06.2019թ.
Ժամը 10:30

Ք. Սևան

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան
Դոնարա Լալազարյան
Մարիաննա Առաքելյան
Անուշ Մարտիրոսյան
Ռոմելա Հարությունյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/19 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(Մ. Սիմոնյան)

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:
2.1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին:
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին.
(Մ. Սիմոնյան)

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 19.06.2019-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ **<<Արֆարմացիա>> ՓԲԸ-ի, <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ի և <<Լեյկո>> ՍՊԸ-ի՝** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ

հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է հարցման մասին տեղեկատվությունները, համաձայն որի <<**Արֆարմացիա**>> **ՓԲԸ-ն, <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ն և <<Լեյկո>> ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.
(Մ. Սիմոնյան)

2.1 19.06.2019թ-ին առաջին տեղն զբաղեցրած բոլոր մասնակիցներին ծանուցում էր ուղարկվել՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/19 ծածկագրով հրավերով նախատեսված փաստաթղթերը:
2.2 <<**Արֆարմացիա**>> **ՓԲԸ-ն և <<Լեյկո>> ՍՊԸ-ն** հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացրել են հրավերով սահմանված ժամկետում և կարգով:
<<**Նատալի Ֆարմ**>> **ՍՊԸ-ն** հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը չի ներկայացրել:
2.3 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 47-րդ կետով որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը, որի մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել <<**Նատալի Ֆարմ**>> **ՍՊԸ**-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 02.07.2019թ-ի ժամը 15:00 շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
(Մ. Սիմոնյան)

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.</u>**
(Մ. Սիմոնյան)

5.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/19 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 02.07.2019թ.-ին 15:00, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝		Մ. Սիմոնյան
Անդամներ՝		Դ. Լալազարյան
		Մ. Առաքելյան
		Ա. Մարտիրոսյան
		Ռ. Հարությունյան
Գնումների համակարգող՝		Լ. Դավթյան